

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ԹՈՐՕՏՏԻԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրութիւն պէտք է ուղղել առ

Տեղիւն ԱՐՇԱԼՈՅՍ յարգի

ԳԱԶԻՐԷ (Նամակատի)

Թիւ


E. TOROSSIAN

Direc.-propr. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (EGYPTE)

Boîte Postale No.



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵ-ԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՐԱՐ	
Տարեկան ողջ դասկին	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ ԿԱՆԽԻԿ Եւ թղթատարի ծախքը ԽՈՐԱԳՐՈՒՅԵԱՆ ՎՐԱՅ Կ :

ԽՈՐԱԳՐՈՒՅԵԱՆ ՈՂՈՐԱԾ ԳՐՈՒԹՅԱՆ ԵՍ ԵՆՆ ՏՐՈՒՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ Կանխիկ վճարելի են

Աղէքսանդրիոյ Ս . Պօղոս Պետրոս Եկեղեցւոյ մէջ կատարուած ի յիշատակ Ն . Վ . Հանգուցեալ Ումպերթօ Ա . Թագաւորին հոգեհանգստեան պատարագին առթիւ, Իտալական Հիւպատոսարանի կողմէն Գեր . Վահրամ Ծ . Վ . Ազարեանի ուղղեալ շնորհակալեաց նամակին պատճէնն է հետեւեալը :

R° CONSOLATO
d'Italia
N° 3167

Alessandria d'Egitto, le 20 Août 1900

Monseigneur

En mon nom ainsi de celui de l'Agent Diplomatique d'Italie, je vous adresse mes plus vifs remerciements pour la messe de requiem que vous avez bien voulu célébrer ainsi que pour le discours que vous avez prononcé en l'honneur de la mémoire du feu mon regretté Souverain Humbert I. et je vous prie d'agréer l'assurance de ma haute considération.

Le Consul d'Italie
C. ROMANO

ԱՐՔ . ՀԻՊՏԱՍԱՐԱՆ
ԻՏԱԼԻՈՅ

Աղէքսանդրիա 20 Օգոստ.

Գերապատիւ Հայր ,

Յանուն իմ և յանուն Իտալիոյ Գործակատարութեան կը ներկայացնեմ ձեզ իմ ջերմ շնորհակալիքս այն Հոգեհանգստեան պաշտօնին համար , զոր հաճեցաք կատարել , ինչպէս նաև այն դամբանականին համար՝ զոր խօսեցաք ի յիշատակ իմ ողբացեալ Վեհապետիս Ումպերթօ Ա . ի և կը ինդրեմ որ ընդունիք խորին ակնածանացս հաւաստիքը :

Հիւպատոս Իտալիոյ
Ս . ՌՕՄԱՆՕ

ՆՕՄԱԿ ԱՂԷՔՍԱՆԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐՇԱԼՈՅՍԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԹՂԹԱԿՅԷՆ

Աղէքսանդրիոյ Ս . Պօղոս Պետրոս Եկեղեցւոյ մէջ անցեալ կիրակի օր հանդիսաւոր Ս . պատարագ եւ պաշտօն կատարուեցաւ ի յիշատակ Իտալիոյ Ումպերթօ Թագաւորին :

Եկեղեցիի պարտիզին արտաքին եւ ներքին գումերը սեւով պատած եւ Իտալական դրօշներով զարդարուած էին , որոնք սեւ բոլորակներու մէջ

կը գրկէին թագաւորին անուան սկզբնատարը , սպիտակ երկզով : Իսկ տաճարի մեծ եւ երկու կողմի փոքր դռները սեւ վարագոյրներ անցըուած էին , որոց վրայ նոյնպէս կ'երեւար « Ո » սկզբնատարը :

Եկեղեցիին մէջ պատարասուած էր շքեղ մահաբեմ մը , բազմաթիւ աստիճաններով , որոց գագաթը զետեղուած էր դագաղը եւ ծանրազին թաւշեայ ծածկոցով եւ Իտալական ազգային դրօշակովը պատած , վրան ունենալով ինչ եւ Աւետարան . չորս կողմը բազմաթիւ կերտներ , իսկ ամբողջ մահաբեմը կանանչ բոյսերով ճաշակաւոր կերպով զարդարուած , այնպէս որ հաճելի պարտէզի մը տպաւորութիւնը կը թողուր այցելուին վրայ : Մահաբեմը շատ գնահատուեցաւ մանաւանդ օտարազգիներէն :

Ժամը ճիշտ 10 ին պատարագը սկսուեւորկայ էին Իտալական Հիւպատոս Ռօմանօ Ապետը . Փոխ-Հիւպատոս Պ . Պուրտէզ , համազգեստով . Բաղաքիս Վսեմ . կառավարիչը , Մահմուտ փաշա Սըտքը եւ քարտուղարը Պէնետուչչի Պէյ . Ոստիկանութեան առժամեայ հրամանատար հազարապետ Մարթէն , Ոստիկանութեան հրամանատարի օգնական Զիբուլարօ Պէյ . հարիւրապետ Տէ Թուրքիս . Իտալական վարժարանաց Տնօրէնք եւ Տնօրէնուհիք . Իտալական Բարեգ . Ընկերութեան Ատենապետը , « Իլ Մաթինօ » « Մէսաճիէրէ Էճիցիանօ » եւ « Նոր-Օր » թերթերուն ներկայացուցիչներն ու ժողովրդեան խուռն բազմութիւնն :

Թաղ . Խորհուրդը Պանտա Սափօյա նուագածուաց Ընկերութեան Տնօրէնին ալ հրաւէր զրկած ըլլալով , յիշեալ ազնուութիւն ունեցած էր պատուիրել նուագածուաց խմբին որ նոյն օրը ներկայ գտնուին :

Պանտա Սափօյաի ներկայութիւնը մեծապէս աւելցուց հանդէսին փայլը : Հիւպատոսը երեսցածին պէս խուճըր , որ պարտէզին մէկ կողմը կեցած էր , սկսաւ նուագել ախուր մահանուագ մը , որմէ յետոյ պատարագը սկսաւ : Պատարագիչն էր եկեղեցւոյն քարոզիչ Տ . Վահրամ Ծ . Վ . Ազարեան : Յաւարտ արարողութեանց Ազարեան Վարդապետ պարագային յարմար հակիրճ բանախօսութիւն մը արտասանեց հայերէն լեզուաւ , որու Ֆրանսերէն թարգմանութիւնը կարդաց Թաղական Խորհրդոյ Բարտուղարը :

Ի վերջոյ հրաւիրեալները Առաջնորդարան առաջնորդուելով՝ պատուասիրուեցան սուրճով : (1)

Յաջորդ օրը Իտալական Հիւպատոս Ռօմանօ Ապետը նամակ մը ուղղելով Տ . Վահրամ Վ . Ազարեանին շնորհակալութիւն կը յայտնէր յանուն Իտալիոյ Դիւանագիտական գործակատարին թէ՛ պատարագին եւ թէ՛ քարոզին համար :

Իտալական Փոխ-Հիւպատոս Պուրտէզ Ապետը , երեկ Ազգ . Առաջնորդարան այցելութեան

(1) Հիւպատոսին մեկնած պահուն նուագածուաց խումբը Իտալական ազգային երգը հնչեցուց ու ժողովուրդը գողաց « Կեցցէ՛ Վերթօր Էմմանուէլ Գ . » — Իսկ Վսեմ . կառավարչին մեկնելու ատեն նուագուեցաւ Խաթիվական քայլերգը որ ծափահարութեամբ ողջունուեցաւ :

եկաւ եւ երեք քառորդ ժամու չափ տեսակցեցաւ Արթ . Տ . Վահրամ Ծ . Վ . Ազարեանի եւ Պատ . Թաղ . Խորհրդոյ անդամոց հետ :

Պուրտէզ Ապետը խորին շնորհակալութիւն յայտնեց ի յիշատակ Ումպերթօ Թագաւորին կատարուած հոգեհանգստեան պատարագ-պաշտօնին համար եւ յայտարարեց թէ՛ ասիկա գեղեցիկ առիթ մը պիտի ըլլայ առաւել եւս ամբապնդելու երկու ժողովուրդներու բարեկամական յարաբերութիւնները :

Պարոն Փոխ-Հիւպատոսը յարեց թէ՛ ամբողջ արարողութեան նկարագրութիւնը մանրամասնօրէն պիտի տեղեկագրուի Իտալական կառավարութեան եւ այս առթիւ ինդրեց Տ . Ազարեան հօր քարոզին պատճէնը , միասին զրկելու համար :

Խնդրուած պատճէնը անմիջապէս խրկուեցաւ Իտալական Հիւպատոսարանը , հանդեմ քերանսերէն թարգմանութեամբ Գ

Տեղւոյս Իտալական գաղթականութեան երեւելիներէն Տիար ձիօվաննի Սթանի վախճանած ըլլալով , հրաւէր խրկուած էր Ազգ . Առաջնորդարանին՝ յուղարկաւորութեան ներկայ գտնուելու : Ըստ այնմ Տ . Վահրամ Վ . Ազարեան , ընկերակցութեամբ Թաղ . Խորհրդոյ քարտուղարին , ներկայ գտնուած էր մեծերկան հանդէսին : Երկու օր յետոյ հանգուցելոյս որդիքը 50 անդ . ոսկւոյ չէք մը զրկեցին Թաղ . Խորհրդոյ հասցէին , ի նպաստ Հայ կարօտելոց :

Թաղ . Խորհրդոյ առժամեայ Փոխ-Ատենապետ , Գրիգոր ԷՓ . Մելքոնեան , անմիջապէս փութաց թէ՛ մասնաւոր նամակով եւ թէ՛ Առաջարկ միջոցաւ շնորհակալութիւն յայտնել ազնուասիրտ նուիրատուաց :

23 Օգոստոս 1900
Աղէքսանդրիա

Ս Ա Ր Դ ՈՒ Ն Ս Ե Ծ Ը

Եթէ բարոյասէրի աչքով դիտենք մարդկութիւնը՝ կարող պիտի չըլլանք արդարացիել այնքան անհաւասարութիւն որը մինչև այսօր կը պահպանուի փոքրաթիւ զօրաւորներու ճնշման և խիստ ստուար թրուով տկարներու իրաւունքի անգիտակցութեան շնորհիւ :

Ընչաքաղց ուժեղին , տկարը կլլելու երեւոյթը այնքան սովորական դարձած է որ , ենթարկուողը իր անբաղդութիւնը ըստէպ ճակատագրին կը վերագրէ :

Այսպէսով ամուր հանգոյց մ'ալ գրած կ'ըլլայ իր արդար իրաւանց առջև , զորս միշտ քակել կը ճգնին գաղափարի զինուորները :

Դասակարգերու գոյութիւնը արդիւնք են կեանքի աններդաշնակ հոսանքին . և

Ինչ իրաւունքով որ կը պաշտպանուի իրաց ներկայ վիճակը նոյն և աւելի լա՛յն իրաւունքով կարելի է իջեցնել անանկ անճոռնի սանդուխ մը՝ որը միշտ սպառնալիք մ'է ժողովուրդներու մտաւոր և բարոյական յառաջդիմութեանց :

Ամեն անհատ երկրի բարիքը լիառատ վայելելու իրաւունքը ու աշխատանքի որոշ պարսն ալ ունենալու է :

Մտաւորապէս կամ ալլապէս առաւելութիւն ցուցնողները ընկերական օրէնքով ինպատակ հանրութեան երբ նուիրեն իրենց ուժերն, այն ատեն շատ յայտնի կ'երեւայ յեղաշրջումը մարդկութեան արդի դատապարտելի կեանքին :

Փոխադարձ անհասկնալիք ծառայութիւնը միայն կրնայ թէթեւցնել ա՛յն քննը, որ մեծ անդժութեամբ գրուած է ազգատի ուսին :

Օր ըստ օրէ գրամագլխի ահեղ աճումը երկաթէ կապանքներու մէջ կը ճնշէ բանուոր դասը . ասանկով դրամի ազդեցութեամբ գերի գարձողները կ'երեւի ա՛յն ատեն միայն պիտի չարժուին՝ երբ արդէն սուր իրենց կոկորդին հասած ըլլայ :

Ա՛րք բանասիրները կանուխէն լա՛ւ համոզուելու են թէ՛ իրենք ո՛ր և է բանով երախտապարտ է՛ն գործարանատիրոջ ընդհակառակը կեղեքողն է որ իր հարստութեամբ կը պարտի շահագործուողի ա՛յնքան թափած քրտանց :

Ինչ կ'արժէ կարմիր մետաղը առանց աշխատող տարրին :

Եւ միթէ տիրելու այս անխիղճ գրութեան պտուղը ամեն այն թշուառութիւնք է՛ն, որոց մէջ լողացողները ամեն օր կը գիտեն միւս ծայրը գտնուող հաստափոր գրամատէրին քմծիծաղը . . . :

Արդեօք ամեն մարդու, ամեն մանկան բերանը հաց տեսնելու ցանկութիւնը դատապարտելի է :

Ո՛վ գիտէ՛, ի՞նչքան թարմ ուժեր կ'ըսպառուին սնտեսական անցկութեանց պատճառով և ի՞նչքան ալ ուրախութիւններ լացիկը վերածուին . . . :

Ամեն ձեռնհաս մարմինք միթէ պարտազանց է՛ն ըլլար, երբ սեւ ակնոցով կը գիտեն այնքան լուսաւոր ճշմարտութիւնները :

Ո՛վ պիտի խորհի թշուառին, անկարին և որբին համար :

Ո՛վ է իրապէս մեծ մարդը :

Ժողովրդին զուտ օգտի տեսակէտով հարցը շոշափելով հանրութեան երջանկութեանը համար սիրայօժար իր անձը զո՛ւտուողին միայն կարելի է անուանել մարդուն մեծը :

ՀԱՄԵԼՆՅԻ Ս.

Ի Ղ Ձ

Ո՛հ Հայրենեացս քաղցր ատեց, յիշատակը դառն՝ արքա մերձ . քանի՛ հեծծիւն եւ հաւաքանք, խրչիք կրծքես իմ անասպակ :

Խորիս Մասիս արդ ստունացած, ձորք գեղանիք աշտմ անկաւանս, ո՛վ զովարար դաշտեր դո՛ւք յար, միևն զե՛րք ղնկնիք՝ ձեռաց օտար . . . :

Պերձ դիւցազանց հե՛ք Հայրենիք, աշխատ արտար, գողցար հերիք, ո՛հ . անձկալիքս ևն ինձ կարօս, փարսէ՛ք՝ քո սիրուն սեւօք :

Տ . ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ .

ԱԶԳ

Ընկերութեանս առաջին տարեշրջանին լրանալուն առթիւ Ընդհ. Ժողով պիտի գումարուի Օգոստոս 26 ի կիրակի օրը, հետևեալ օրակարգով .

- 1. Ընտրութիւն Կործադիր Ժողովոյ .
2. Ընտրութիւն մայր Դիւանի :

Կը խնդրուի յարգոյ անդամներէն ներկայ գտնուիլ սոյն ժողովոյն, որ յա՛ւննայն դէպս տեղի պիտի ունենայ մեծամասնութիւն համարելով ներկայից թիւը : Նաև կրնան ներկայանալ այն ամեն ազգայինք որոնք կը փափաքին անդամակցել ընկերութեանս :

Ժողովատեղին է «Պառ. տը ՂԱՖրէր», Շաքիա Ապտիւլ-Ալիզ սափրիչ կարապետ Գէորգեանի խանութին ճիշտ գիմացը . Ժամը իրիկուան 8 1 (2 ին :

Ի՛ գիմաց Լարան-Ընթերցատուն Ընկերութեան Մայր-Դիւանի

Բ . Ատենապարտ Բ . Ատենապետ
Ե . Քերթիճէճեւն Ա . ՊԱԼԵԱՆ
Գահիրէ 24 Օգոստ . 1900

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ

Բ - ՏԱՐԻՈՅ

Մեր նախորդ թուով կ'սկսինք Արշալոյսի Բ . տարին և ինչպէս սակէ առաջ ծանուցած ենք, հաստատամտութեամբ պիտի շարունակենք մեր ուղին :

Մեր Պատ. բաժանորդներէն անոնք որ պիտի շարունակեն ընդունիլ Բ . տարւոյ թերթերը և անոնք որ նոր բաժանորդագրուիլ կ'ուզեն, թող հաճին ծանուցանել մեզ գրաւոր կամ բերանացի :

Աւելորդ պիտի ըլլայ ըսել թէ՛ թերթին գոյութիւնը և յարատեւութիւնը վերջնապէս կ'ապահովուի, երբ մեր շանքերուն կը միանայ մեր արգոյ ազգայնոց գործնական քաջակերութիւնը :

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտրա 20 Օգոստոս . — Վերջին լուրերուն նայելով դաշնակիցները կը շարունակեն կայսերական պալատին շրջափակին մէջ ապաստանող Չինացիներուն պաշարումը . Լիբէրէնհէնկ, որ կատաղի հակառակորդ մ'էր օտարականներուն, կուրին մէջ սպաննուած է :

Բրէթօրիա 20 Օգոստ . — Զօրավար տը Ուէթ տեսնելով որ զօրավար Պէյտըն Բօուէլը ամրապէս պատնէշուարուած է, իր ճամբան շարունակած է դէպի հիւսիս :

Թանժէր 20 Օգոստոս . — Մարօք պետութիւններուն չրջաբերական մը զրկած է, բողբելով Ֆրանսայի սոնձգութեանց դէմ :

Հոովմ 21 Օգոստոս . — Վալտերգէ կոմսը հասաւ . այսօր թագաւորին հետ նախաճաշեց, վաղը նարոլի պիտի մեկնի :

Բարիզ 21 Օգոստոս . — Լիհունկանկ պետութիւններէն ինքզանք է, որ իրենց ներկայացուցիչները նշանակեն, խաղաղութեան բանակցութիւնները սկսելու համար :

Բարիզ 22 Օգոստոս . — Մարչան գնդապետին համար որոշուած է Չինաստանի արշախուճի սպայակաթին մէջ ծառայելու :

Վալտերգէ մարմախտը նարոլին նաւաստած է :

Բրէթօրիա 22 Օգոստոս . — Տեղակալ Գորտուա, ամբաստանուած բոլոր պետերու մէջ յանցաւոր հռչակուած է . վճիռը Լորտ Ռօպըրթսի վերապահուած է : Պէյտըն Բօուէլ և Բէյնճէթ զօրավարները վերջապահ կուր մը մղած են անցեալ երկուշաբթի տը Ուէթի և Տըլարէյի հետ, որոնք կը հալածուին նաև Համիլթօն զօրավարէն : Յայտնի է որ տը Ուէթ կուզէ Պուշվէլթ հասնել, ուր կը յուսայ ընդհանուր համախմբում մը ընել Պօթա զօրավարին հետ :

Հարրինկթօն զօրավարը պաշար կը դրկէ Լորտ Մէթուէնի, որ Օթթօօրի մօտ Լիլթէնպուրի գօմանտօրին հետ կուր բռնուած է :

Գնդապետ Սիթուէլ 3 վիրաւորեալ և անյայտացեալ ունեցած է Վէյթէրսպուրի մօտ կատարուած հետախուզութեան մը պահուն :

Բրէթօրիա 22 Օգոստոս . — Կ'ըսեն թէ Լուի Պօթա և չորս ուրիշ Պօէր հրամանատարներ 8000 հոգիով և բոլոր հրետանիներով կեդրոնացած են ի Մաչատօտօրի :

Թիէն-Չին 23 Օգոստոս . — Պրանսական զօրաբաժինն մէկ մասը կարողացած է հասնիլ դաշնակցաց գլխաւոր խումբին և ձեռնուտ գտնուած է Բէյքինի առման :

Գերմանական յառաջապահը 17 ին հասած է :

Լոնտրա 23 Օգոստոս . — Ամերիկացիները 38 հոգի կորսնցուցած են Բէյքինի առման ժամանակ : Սիլբերը, որք ամենէ առաջ մտան թաթար քաղքին մէջ երկու մարդ կորսնցուցին :

Բարիզ 23 Օգոստոս . — Պետութիւնները մերժած են բանակցել Լիհունկանկի հետ, անձեռնհաս նկատելով զայն :

Շանհայ 23 Օգոստ . — 100 ձրանսացի նաւատորներ Շանհայի ցամաքը ելած են, տպաւորութիւնը սքանչելի եղած է :

Լոնտրա 23 Օգոստ . — Բէյքինի յարձակման ժամանակ Ռուս զօրաբաժինը 129 հոգի կորսնցուց . Զօր . Վալիէյսի վիրաւորուած է :

Տիւրքան 23 Օգոստ . — 2080 գերիներ և Կլօսթը Շայր Ռէթիմէնթի կէս գումարտակ զօրք այսօր Սէլլան զրկուեցան, երեք փոխադրանաւերով :

Լոնտրա 23 Օգոստոս . — Պօէրները Տանահուզէնի մօտ 100 եարտաի չափ երկաթուղի քանդեցին, կառախումբ մը դժէն շեղեցուցին և խոչը թնգանօթ մը հաստատեցին Ինկօօ, որով կամուրջը սքանդեցին :

Լորտ Ռօպըրթս կը հեռագրէ թէ՛ տը Ուէթ Մակալեսպէրկի լեռները կրկին անցաւ 300 հոգինոց խմբով մը . իր Թրանսվալի Արհիլք հասնելու փորձին մէջ ձախող ելած է (°) իր թնգանօթները թաղած է (°) միտք ունի գարձեալ Օրանտ գառնալու :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՓԻԼԻՊԵԱՆ ԿՂՁԵԱՅ ՄԵՋ

Հեռացի Մանիլայի թղթակցը Պ. Մաք Բիւլըն, Փիլիպին կղզեաց կացութեան վերայ հետեւեալը կը գրէ :

« Կուրը դեռ շատ հեռու է վերջանալէ, Թակալները կը շարունակեն դարձեալ մեծ գործունէութիւն ցուցնել և Սպանիացուցմէ աւելի անհաշտ որ մը ուխտած են Ամերիկացուց : Այս պահուս Միացեալ Նահանգները հոս 61000 զօրք ունին իւր պահակախումբ, 216 քաղաքներու և գիւղերու մէջ բաժնուած : »

« Չինորական իշխանութեանց « Աւազակային խումբեր » անուանածնին, Թակալներու կազմակերպեալ խումբերը 600-800 հոգիէ բաղկացած են, ընդհարումները միշտ անպակաս են : Թակալները 20000 հոգիի չափ զինեալ մարդ ունին և իրենց գունդերը ազատորէն կը գործեն, Ամերիկացուց գրաւած շատ մը չըմանակներուն մէջ : »

Ակիւնալտո ի սպայակոյտին պետ Ջոր. Գոնտեփիսիոն այսպէս կը յայտարարէ :

« Կը կարծէք թէ պատերազմը վերջացած է . չարայար կը սխալիք . մեր բանակը ջախջախեցիք և ցրուեցիք, բայց քանի՞ հաս հրացան առիք . մենք ձեր գրաւած նահանգներուն մէջ իսկ մեր իշխանութեան կեդրոնները ունինք : »

Մեր զինուորակոչումները հանդարտորէն կը շարունակենք դարձեալ, թէպէտեւ այժմ մեր զինուորները աշխատաւորի հագուստ կը կրեն և խաղաղօրէն իրենց գործերով կը պարապին . եթէ մեր զէնքերը գրաւէք, այն ատեն միայն կրնաք պարծենալ թէ յեզափոխութիւնը վերջացած է :

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ —

Նայե Յրայե քրէսէ հետեւեալ շահեկան յօդուածը կը հրատարակէ :

« Չինու արգի կայսրը շատ խախուտ առողջութիւն մը ունենալուն, և գահաժառանգը Թուան իշխանին տղան ըլլալուն համար, չարտօնուի գահը բազմիլ :

Պէրլինի Չինական դեսպանատունը կը պնդէ որ անոր տեղը նստի Շինկ իշխանը, որ ներկայ տագնապին մէջ ինքզինքը ամենէն խոհեմը ցոյց տուած և Եւրոպացուց իրաւանց ամենէն շատ պաշտպան կեցած է :

Թ Ո Ւ Ք Ի Ա

Սուլթանը զօրաբաժնի զօրավարի ատիճանը տուած է կիսաբաժնի զօրավար Մահմուտ փաշայի, որ տղան է Եգիպտոսի Օսմանեան արտասովոր պատուիրակ Մուխթար փաշայի :

Մահմուտ փաշայ որ արձակուրդի մէջ էր, շուտով Պոլիս պիտի դառնայ :

Թուրք թերթերը կը հրատարակեն Պոլսոյ մէջ Սուլթանի գահակալութեան աւթի բացուելը որ համալսարանի ծրարակիր . այս հաստատութիւնը պիտի կոչուի « Կայսերական Համալսարան » :

Սոյն Համալսարանը պիտի բաժնուի 4 ճիւղերու, Կրօնական բարձրագոյն ուսմանը Մաթէմատիքի, Բնագիտութեան և գրականութեան . Կրօնական դասընթացները չորս տարի պիտի տւեն իսկ միւսները երեք :

Ուսուցիչները պիտի առնուին Տնօրէնին առաջարկութեամբ . թիկնածուները քն-

նութենէ յետոյ պիտի ընդունուին և 28 տարիքը անցուցած չի պիտի ըլլան, նաև պէտք է վկայեալ ըլլան կամ Սուլթանիէն կամ Վաճառականական վարժարանէն կամ Տար-իւլ-Շէֆազայէն և կամ Մայրաքաղաքին ու գաւառներուն Իտատիէ վարժարաններէն, կամ թէ՛ ցոյց պէտք է տան միւսնոյն գիտութիւնները ու կարողութիւնները՝ որ ունին վերայիշեալ վարժարանաց աշակերտք :

Միւլքիյէն, Իրաւաբանական վարժարանէն և Վարժապետանոցներէն ելլող ուսանողները առանց քննութեան պիտի ընդունուին :

Իւրաքանչիւր ընդունուող թիկնածունքուն թիւը պիտի ըլլայ կրօնական ճիւղինը 30, իսկ միւսներունը 5 . մուտքի վճարումն է կէս Օսմ . ոսկի, ասկէ զատ ուսանողները պէտք է վճարեն իւրաքանչիւր եռամսէի մէկ քառորդ ոսկի, տարեկան քննութեանց ժամանակ կէս ոսկի . վկայական ընդունած ատեն երկու ոսկի :

Կ . Պոլսէն Օգոստ . 14 թուականաւ կը գրեն թէ՛ Անգլիոյ Փոյս Հիւպատոսը Վանի մօտ չըլազայութեան ելած պահուն, յարձակում կը կրէ խումբ մը քիւրտերէ, որք կը զարնեն իր հետեւորդները, կը վիրաւորեն թարգմանը և կը կողոպտեն գոյքերը :

Այսօր Անգլիոյ դեսպանը Բ . դուռնէն պահանջած է յանցաւորներուն ձերբակալուելով պատժուիլը :

Այս աւթիւ կ'ըսեն թէ Տիարպէքիի հիւպատոսը որ Ալէքսանտրէթ կ'երթար, յարձակում կրած է թուրքէ մը, որ վրան հրացան պարպած է . հակառակ ֆրանսական դեսպանատան պահանջումին ոճրագործը չ'է ձերբակալուած :

— Հակառակ եղած հերքումներուն, ալ տարակոյս չ'կայ Սբազանքի շարդին վերայ . որովհետեւ դէպքերը հաստատեցին էրզրումի և ուրիշ տեղերու հիւպատոսներուն տեղեկագիրներն :

Չոհերու թիւը դեռ յայտնի չ'է . Սբազանքի բնակիչներէն, կ'ըսուի թէ՛ 4-500 հոգի բոլորովին անհետացած են, բայց յայտնի չ'է թէ այս ամենը շարժումն են թէ անոնց մէկ մասը յաջողած է մերձակայ լեռները ապաստանիլ :

Ֆրանսայի և Ռուսիոյ դեսպանները Բ . Իրան ուշադրութիւնը հրաւիրեցին Սասունի շարդերու մասին :

Շատ կը մեկնաբանուի այն իրողութիւնը որ հակառակ չորս դեսպանաց տուած բողոքին, Հայէպի Վալին իր պաշտօնին վրայ կեցած է դեռ :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

ՀԱԿԱՀՐԷԱԿԱՆ ԽՈՌՎՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՏԷՍԱՅԻ ՄԵՋ

Օտէսաէն թայմզի կը հեռագրեն հետեւեալը :

Հրէից թաղին մէջ խռովութիւններ ծագած են և երկուշաբթի ու երեքշաբթի օրերը դարձեալ կրկնուած են :

Արուարձանին մէջ 2 զինուորներ սպանուած են . կիրակի և երեքշաբթի իրիկուն 120 է աւելի հրէաներ հիւանդանոց տարուած են, մեծ մասամբ ծանրապէս վիրաւորեալ :

Հինգ հրէայ արգէն մեռած են . Բազմաթիւ հրէայ խանութներ թալուած են :

Կառավարչին մէկ յայտարարագիրը կ'ըսէ թէ 1200 ձերբակալութիւններ կատարուած են :

Կարգը վերահաստատուած է :

ՏԵՂԱԱԿՆ ԼՈՒՐԵՐ

— Ինչպէս այսօր մեր Ալէքսանդրիոյ թղթակցութեան մէջ ալ յիշատակուած է, տեղական բոլոր թերթերը կը ծանուցանեն թէ՛ Իտալական դադարակալութեան երեւելիներէն, Սթանի որդիք, իրենց հօրը մահուան աւթիւ 50 անգլ . ոսկի նուիրած են Հայ բարեգործական ընկերութեան :

— Կը տեղեկանանք թէ՛ Խառն դատարաններու արձակուրդէն օգտուելով, Ալգ . Առաջնորդարանի փաստաբան Մեծ . Տիար Յակոբ Ասատուր Բարիզ մեկնած է, ուր մէկ ու կէս ամսոյ չափ մնալէ յետոյ Գահիրէ պիտի վերադառնայ :

Տիար Յակոբ Ասատուր, իր բացակայութեան ատեն գրասենեկին ընթացիկ գործերը վարելու համար փոխանորդ նշանակած է փաստաբան Վսեմ . Լաթֆի Պէյ Այրուլթ :

— Անցեալ օր կէս օրէ առաջ ժամը 9 ին Իսմայելիէյի Ափրիկեան առաքելութեանց եկեղեցիին մէջ հանդիսաւոր պատարագ մատուցուած է Ն . Վ . Ֆրանց Եօզէֆ կայսեր ծննդեան 70 րդ . տարեդարձին աւթիւ :

Շատ մը ականաւոր անձնաւորութիւնք ներկայ գտնուած են :

— Կը ինդրուի մեզմէ ծանուցանել թէ՛ ամեն անոնք որ Իրօջակ կարգալու փափաքը ունենալով՝ դժուարութիւն կը կրեն զայն իրենց տրամադրելու, կրնան գիմել հետեւեալ հասցէին :

Պ . Ա . ԱՊԱՐԵԱՆ

Բօսթ—Ռէտպանք

ԳԱՀԻՐԷ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՄԱՐԳԻՐ

— Միւնիխի զինուորական հիւանդանոցէն բժիշկ մը իր քով ունի 1870 ի Ֆրանքօ-Գերմանական պատերազմէն մնացած թնթանթած թմբի մը, որ ո՛չ թեւ և ո՛չ ոտք ունի և ասկից զատ ալ պատերազմի պահուն երեսին կէսը ունի մը պայթումէն կորսնցուցած է :

Շնորհիւ մետաղական դիմակի մը որ ճարտարօրէն դեմքին վրայ շտկուած է, կարողացած են տեսողութիւնը պահելու :

Այս անձը մի քանի օր յառաջ զոյգ մը նոր կատարելագործեալ անգամներ ալ ըստանալով՝ Միւնիխի բժիշկը հետաքրքրաշարժ գաղափարը ունեցած է հաշուելու թէ՛ ինչ պիտի արժէ արուեստական մարդ մը, այսինքն նոր գիտութեան հնարած գործիքներով հագուած մարդ մը :

Չոյգ մը յօդուոր ձեռքերով թեւեր կ'արժեն 730 ֆրնք . սրունքներ 700 ֆրնք . մետաղէ կեղծ քիթ մը 500 ֆր . արհեստական թմբակներով և ռէզոնաթէօն ներով ականջներ 650 ֆր . բլաթինէ քիմքով ատամնաշար մը 200 էն 450 ֆր . վերջապէս զոյգ մը լաւ բնական աչքեր 140 ֆր . ուրեմն մարդ մը նորոգելու համար առ նըուական 3000 ֆրանքի պէտք կայ :

Գ Ա Ֆ Է Ե Փ Ր Ա Տ

ԱՊՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պաշտօնի եւ նուագածուաց խմբի
Զօրանցիկն ճիշտ դիմացը

ՕՅԱՆՆԵՍ ՄԻՄՈՆԵԱՆ • ԵՒ
ԴԱՆԵՒԷԼ ՀԱՅՍԳՈՐԾԵԱՆ ԸՆԿ •

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ ազգայնոց թէ՛ հանգստի ժամերն առողջարար օգ ծծելով զուարճանալու և զովարար ըմպելիներով յողնած մտքերը կազդուրելու համար, կրնան դիմել ԵՓՐԱՏ ՄՐՃԱՐԱՆԸ, որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ հողածուծեամբ և խնամով զարդարած և յաճախողաց հանգիստը ի նկատի ունենալով պատշաճագոյն վիճակի մը մէջ դրած է :

ԳՍՖԷ ԵՓՐԱՏ ի մէջ կը մեծարուն զովարար ըմպելեաց ամենամաքուրները ընտիր և թարմ օշարակներ, անխարդախ սուրճ և անխառն կաթ :

Հոն դիմող յաճախորդք գոհ պիտի մնան, գտնելով մաքրութիւն, ճաշակաւոր սպաս և անթերի ծառայութիւն, ամենէն խտտապահանջները գոհացնելու աստիճան :

ՀԱՅ ՃԱԶԱՐԱՆ

ՄԻՋՐԱՆ ԵՂՐԱՐԻ ԳՈՋԱՆՃԵԱՆ

ՇԱՐԻԱ ԱՊՈՒ — ՍԱՊԱՀ

Նեով՝ Դուրսիկուսի Դեղատանիկն դիմացը

Որ և է կերակուր ախորժահամ և սընդարար ըլլալու համար պէտք է, մսի, իւղի, բանջարեղենաց լաւագոյն տեսակը ընտրել. այն համոզմամբ որ սննդարար կերակուրը ստամոքսին կենսատուն է, ով որ ստամոքսին յարմար կերակուր չ'ընտրել ախորժակին թշնամանանք կ'ընէ :

Իրենց կենաց բարեկամ եղողներն կը հրաւերենք յաճախել վեր վերոյիշեալ ճաշարանը, վստահ ըլլալով թէ՛ գոհութեամբ պիտի մեկնին :

Իրենքն ԻՒԿՐԱՄՍՏՉԵԼԻ ԵՆ :

ԿԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒ

ՆՏՈՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և խեղճակաւոր երաժիշտներու աջակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուել ուզողներն, կրնան դիմել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

« ԱՐՇԱԼՈՅՍԻ »

Հիմնաւ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՆ ԱԶԻԶԻ ՍԿԻՉԲԸ

Օտանկի դեղատանիկն դիմացի փողոցիկն մեջ.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7 Էն մինչև երեկոյեան ժամը 8 :
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին :

Այցելատեղ, Երջարեակաւաններ, Գիտեր, Հրատիրագրեր, Մանուշղներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆՈՒԿ ԵՆ :

ԿՈՊԵՌՊԵՆԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ.

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարելոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ փորձառութիւն ստացած է :

Պոլսոյ մէջ Ապտուլլահ եղբարց տան, ինչպէս եւ ուրիշ մը քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատուն մէջ ամենակարելոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօզպեֆիյէ Շարխա Կառմէյ Օթէլ ՇէֆէրՏՍԻ ճիշտ դիմաց թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ գուրսը կուսկներ ի հարկին :

Ակրանիսիանս բնական մեծութեամբ Կենդանագիրներամեքիկեանմեքենայով որոնք երբէք չ'են աւրուիր :

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միլեւաքիտ Իւղաներկ եւ ջրաներկ պատկերներ և ընդլուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ռըքոշ, Տեյէշըքընս և ընդ իրեն դիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ :

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ց

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԳՐԱՍԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն անելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլեւար անելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ԻԳահիրէ

ՏՕԲԹ. Ա. Յ. ԿԵՐԵՍՄԹԷՃԵԱՆ

Ի Շարխա Գոյր-Պէյ, քիւ 20

Իր ջրի խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. և.) 9 Էն 11 սրճած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն դիմել ուղղ աղքատ հիւանդներու :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Երբունի Տիար Ս. Ֆէլէկեանի վերոյիշեալ հեղինակութեան ՉՈՐՈՐԴ Փօրման ալ հրատարակուած է :

Բաժանորդագրուելու փափաքողք, ինչպէս արդէն ծանուցուած է, կրնան դիմել « Արշալոյս » ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ. ուր հեղինակը կը գտնուի կէս օրէ վերջ ժամը 5-7 :

ՀՅԷՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 24 ՕԳՈՍՏՈՍ 1900

1266	4046	2902	4507	394	3195
6564	7766	2789	1056	2327	9971
8775	2764	6691	3147	1913	194
9614	1500	520	6813	1985	1443
		756	5251	9589	

ՏՕԲԹ. ԺՈՐժ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՍԵՐԻԿԱՆ ԱՏԱՄԵԱՐՈՑԻ

Ապսին Շարա Գուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակուաններ :

Կը դադրեցնէ վայրկենապէս ակուսիցյաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով :

Կը բուժէ լինաերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած ակուաներուն սովորութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երայխաւորէ :

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5 :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ անելի երայխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ անելի ապահովագրութիւններ ունի և անելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յԱղքատներու